Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿԱԲԻՆԵՏԻ ՄԻՋև՝ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԵՐԵԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿԱԲԻՆԵՏԻ ՄԻՋև ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ուկրաինայի Նախարարների կաբինետը, այսուհետ՝ Կողմեր, համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ուկրաինայի Նախարարների կաբինետի միջև 1999 թվականի հոկտեմբերի 5-ին Երևան քաղաքում ստորագրված՝ կառավարական կապի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Իրավասու մարմիններ» - Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն և Ուկրաինայի հատուկ կապի ու տեղեկատվության պաշտպանության պետական ծառայություն:

Հոդված 2

Սույն Արձանագրությունը հանդիսանում է 1999 թ. հոկտեմբերի 5-ին Երևան քաղաքում կնքված՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ուկրաինայի Նախարարների կաբինետի միջև կառավարական կապի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 3

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է Կիև քաղաքում 2011թ. հուլիսի 1-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Արձանագրության մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում Կողմերը կդիմեն ռուսաց լեզվով շարադրված տեքստին:

Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2012 թ. հունվարի 30-ին